ԱՐՏԱՇԱՏԻ VIII ԲԼՐԻ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ա. Գ. ԿԱՆԵՑՅԱՆ

1970 թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը (ղեկավար՝ Բ. Ն. Առաքելյան) ձեռնարկեց անտիկ շրջանի Հայաստանի մայրաքաղաքներից մեկի՝ Արտաշատի պեղումները, որոնք Հայաստանի հելլենիստական դարաշրջանի և մ. թ. առաջին դարերի նյութական մշակույթի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեն։ Արտաշատն իր հիմնադրման օրից՝ մ. թ. ա. 180—170-ական թվականներից մինչև մ. թ. IV դ. մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում։ Գտնվելով Արարատյան դաշտում՝ այն հանդիսացել է ոչ միայն քաղաքական, վարչական, այլև առևտրա-արհեստավորական և մշակութային խոշոր կենտրոն։

Առաջին տարիների պեղումները և հետախուզական աշխատանքները ցույց տվեցին, որ քաղաքը զբաղեցրել է հսկայական տարածություն (մոտ 500 հա), միշնաբերդը տեղավորված է եղել Խոր Վիրապի բլուրների վրա (թվով 11)։ Բոլոր բլուրները եղել են պարսպապատ, իսկ որոշ բլուրներ ունեցել են կրկնակի պարիսպներ (№ II, VII) և միմյանց հետ կապված են եղել միջանցքներով։

1971—1973 թթ. աշխատանքները կենտրոնացվեցին հյուսիս-արևելյան մասում գտնվող ոչ մեծ բլրի (№ I) վրա։ Պարզվեց, որ այն եղել է քաղաքի զինվորական թաղամասերից մեկը։ Հայտնաբերված նյութերը վկայում են, որ այստեղ կյանքն սկսվել է քաղաքի հիմնադրման օրից և ընդհատվել մ. թ. I դ. կեսերին, ըստ երևույթին՝ մ. թ. 59 թ. Կորբուլոնի կողմից ավերվելուց հետո։

1973 թ. ամռանը սկսվեց պեղվել հարավ-արևմտյան կողմում գտնվող VIII բլուրը։ Այն համեմատաբար ցածրադիր է, ունի քիչ պայտաձև, ամֆիթատրոնի տեսք, հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան մասում հարում է VII և IX բլուրներին, իսկ հյուսիսային լանջը սահմանակից է դաշտին։ Բլուրը խիստ զառիթափ է, ժայռոտ և ունի 10—20 մ բարձրություն։ Պարիսպների հիմքերը համեմատաբար լավ են պահպանվել հյուսիս-արևելյան հատվածում։

Պեղումները կենտրոնացվեցին բլրի հյուսիսային թևում, որտեղ 1973 թ. ամառային և աշնանային աշխատանքների ժամանակ բացվեց մոտ 600 քմ տարածություն։ Բլրի բարձրադիր մասերում նյութական մնացորդներ պարունակող շերտերը շատ մակերեսային են, որոշ հատվածներում, հողմնահարության հետևանքով, նույնիսկ մերկացել են ժայռերը։ Շերտերը համեմատաբար խորն են ու լավ են պահպանվել բլրի հարավային մասում (մակերեսից 1—2 մ խորությամբ), ուր հայտնաբերվել են մեծ քանակությամբ բնակարանների, արտադրական շինությունների մնացորդներ, կենցաղային իրեր ու առարկաներ։ Դատելով գտնված իրերից, կարելի է հավաստել, որ բլուրը

բնակեցված է եղել շարքային քաղաքացիներով և, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է քաղաքի արհեստավորական թաղամասերից մեկը։



Պեղումները ցույց են տալիս, որ VIII բլուրը նույնպես բնակեցվել է քաղաքի հիմնադրման օրից, և Բ. Ն. Առաքելյանի կարծիքով՝ կյանքն այստեղ հարատևել է մինչև IV դ. կեսերը, այսինքն՝ մինչև Շապուհ II-ի կողմից քաղաքի գրավումը և բնակչության մի մասի գերեվարումը։

Բացված շինությունների հիմնապատերից երևում է, որ այս բլուրը մի քանի անգամ հիմնովին վերակառուցվել է։ Հաշված մանր վերափոխությունները, հստակորեն կարելի է տարբերել, ընդհանուր պլանով կառուցված շինարարական չորս շրջան։

Առաջին շինարարական շրջանի մնացորդները հանդես են գալիս մակերեսից 40—150 սմ խորության վրա։ Դրանք քիչ են և հատվածաբար պահպանվել են երկրորդ շրջանի շինությունների հատակների տակ։ Առաջին շինարարական շրջանը կառուցված է ընդհանուր հատակագծով, սենյակները դասավորված են միջանցքների երկու թևերում, մի փոքր շեղված դեպի հարավ-արևելք և հյուսիս-արևմուտք։ Հատակագծային այս լուծումը պահպանվում է նաև հաջորդ շինարարական շրջաններում (փոփոխվում են միայն ընդհանուր ուղղությունները)։ Առաջին շինարարական շրջանի մնացորդները լավ են նկատվում հարավային մասում՝ 11—19 CF և հատկապես 13—17CF քառակուսիներում։ Որոշ հետքեր մնացել են նաև 13—14 AB, 18 A, 19 B քառակուսիներում։ Պարզորոշ դիտվում է, որ երկրորդ շինարարական շրջանի թեքությամբ դրված պատերը նստած են նախորդ շրջանի պատերի վրա։

Առաջին շինարարական շրջանում սենյակները հարմարեցվել են տեղանքին. պատերը դրված են ուղղակի ժայռերի վրա։ Երբեմն նույն սենյակի պա-

տերից մեկի համար հիմք է ծառայել ուղղահայաց տաշված ժայռը։ Հաճախ սենյակների մեջ ընկած թեքությունները կտրել են կամ քարե պատով տերրասաձև հարթակներ ստեղծել (15—17 CD քառ.)։ Պատերի ստորին մասերը և հիմքերը շարված են միջին ու փոքր չափերի անմշակ, ձեղքված քարերից, որոնք միմյանց կապակցվում են հողե շաղախով, իսկ վերին մասերը եղել են աղյուսից։ Սենյակների հատակները հարթեցված են կավե շաղախով կամ տարբեր մեծության քարերով։ Նույն ձևով են հարթեցվել նաև Արտաշատի I և VII բլուրների մ. թ. ա. II դ. սենյակների, ինչպես նաև Արմավիրի ուշ հելլենիստական շրջանի շինությունների հատակները[1]։ Սենյակների ու բակերի հարթեցման այս եղանակը շարունակվել է մ. թ. առաջին դարերում, երբ այդ նպատակի համար օգտագործել են նաև կրաշաղախ։ Գտնված կրաշաղախի պրոֆիլավորված քիվերը և սվաղի բեկորները վկայում են որոշ սենյակների ներքին հարդարանքի մասին։ Նման քիվերի բեկորներ գտնվել են I և II բլուրներից, ինչպես նաև Հացավանի ամրոցից[2]։

Նկ. 1

Այս շերտում հանդիպում են կղմինդրի առանձին բեկորներ։ Նման բեկորներ գտնվել են նաև Արտաշատի I և VII բլուրների պեղումներից (մ. թ. ա. II—I դդ.) և քաղաքի տարբեր մասերից[3]։ Հետևաբար, Արտաշատում մ. թ. ա. II—I դդ. կիրառվել է շենքերի տանիքները ծածկելու այդ եղանակը, որը VIII բլուրում մ. թ. ա. II—I դդ. տակավին սահմանափակ է։ Արտադրական ու

---

1 Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխատանքները Արմավիրում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 5, էջ 98 և հտ.)։

2 Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1961 թ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 11, էջ 82, նկ. 4)։

3 Բ. Ն. Առաքելյան, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1967, № 4, էջ 305)։

կենցաղային կառույցներից այս շրջանին են պատկանում 17 E քառ. բացված օջախը և 13 D քառ. վառարանը։

Առաջին շինարարական շրջանի կառուցման և գոյատևելու ժամանակը որոշելու համար արժեքավոր են տեղում հայտնաբերված խեցեղեն, ապակե և քարե անոթների բեկորները։ Ապակյա իրերից հետաքրքիր են «փյունիկյան» կոչվող, ավազե միջուկով սրվակների բեկորները (տախտ. I_7, մ. թ. ա. II—I դդ.), կաղապարի մեջ սեղմելու և կաղապարի վրա ապակե թելեր փաթաթելու եղանակով պատրաստված կապտավուն թափանցիկ ապակե թասի (տախտ. I_3) և օղակաձև ոտքով, տեղական անոթի (տախտ. I_4) բեկորները (մ. թ. ա. II—I դդ.)։ Ինչ վերաբերում է պորֆիրիտե սկահակներին, ապա հայտնի է, որ դրանք Հայաստանում հանդես գալով վաղ հայկական շրջանում, հարատևել են մինչև մ. թ. ա. I դ. վերջերը։ Արտաշատում օձաքարե և պորֆիրիտե անոթների բեկորներ հայտնաբերվել են բոլոր պեղված բլուրների (I, II, VII, VIII) մ. թ. ա. II—I դդ. շերտերում։

Հայտնաբերված և՛ գունազարդ, և՛ միագույն խեցեղենները բնորոշ են մ. թ. ա. II—I դդ.։ Դրանք մեծ մասամբ ի հայտ են գալիս 12—18 CF քառակուսիներում, որտեղ մշակութային առաջին շերտերի հաստությունը 30—50 սմ է, իսկ որոշ հատվածներում 80 սմ։ Մյուս քառակուսիներում դրանք պատահական են և հանդիպում են խորդուբորդ տեղերում, ուր պահպանվել են միայն առաջին շերտին վերաբերող չնչին հետքեր։

Գունազարդ խեցեղենից ուշադրության արժանի են մեծ տաշտի շրթի բեկորները (17 E քառ.), հարդարված դարչնագույն ֆոնի վրա թուխ և կարմիր գույնի բուսական, սրտաձև ու երեքնուկաձև, երկրաչափական՝ ցանցաձև ու շրջանաձև զարդերով (տախտ. I_{13}) ու կիսագնդաձև թասերը (12 E և 15F), որոնք ներսից հարդարված են կարմիր ֆոնի վրա սևով արված եղևնաձև, ալիքաձև, եռանկյունաձև և այլ զարդերով (տախտ. I_{9-11})։ Տաշտերը, կիսագնդաձև թասերը, ինչպես նաև նշված նման զարդերը շատ բնորոշ են Հայաստանի հելլենիստական շրջանի խեցեղենին։ Կիսագնդաձև թասեր շատ են գտնվել Արմավիրից[4], Գառնիից, Արտաշատից, որոնք պատկանում են մ. թ. ա. III—II դդ.։ Ըստ երևույթին, դրանք հարատևել են մինչև մ. թ. ա. I դ. առաջին կեսը։ Ուշագրավ են նաև գոտեզարդ տափաշշերի ծաղկաշղթայաձև և բուսական, երկգույն զարդերով հարդարված անոթների, փռված ափսեների բեկորները (տախտ. I_{14-16}), որոնք նույնպես բաղդատվում են Արմավիրում, Արտաշատում (I, II բլուր) և Գառնիում հայտնաբերված հելլենիստական շրջանի նման խեցեղենի հետ։

Այս շերտում հաճախ հանդիպում են նաև գունազարդ թասերի (փիալաների) բեկորներ (18 F, 17 g քառ.)։ Ալիքաձև, եռանկյունաձև և այլ զարդերով հարդարված թասեր հայտնաբերվել են Գառնիի և Արմավիրի հելլենիստական շերտերից[5]։ Արտաշատի I բլրի պեղումները վկայում են, սակայն, որ այդօրինակ զարդերով թասերը լայն տարածում են ունեցել հատ-

---

[4] Б. Н. Аракелян. О некоторых результатах археологического изучения древнего Армавира (ՊԲՀ, 1969, № 4, табл. IV); Г. А. Тнрацян. Древнеармянская керамика из раскопок Армавира (ՊԲՀ, 1971, № 1, стр. 221, табл. $I_{,10}$, $II_{,7}$); Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխատանքները Արմավիրում, նկ. 3։

[5] Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի մ. թ. ա. VII—I դարերի խեցեղենի բնորոշ մի ձև (ՊԲՀ, 1970, № 2, էջ 271 և հտ., տախտ. III, IV)։

կապես մ. թ. ա. II—I դդ.։ Արտաշատի VIII բլրի թասերից մեկը գտնվել է ամենախորը շերտերից և ենթադրվում է, որ կարող է պատկանել մ. թ. ա. II դ. (տախտ. I_8), իսկ երկրորդ՝ ծաղկաշղթայաձև զարդերով թասը՝ մ. թ. ա. I դ. (17 g քառ.)։ Վերջինս գտնվել է Արտավազդ II-ի դրամի հետ մեկտեղ, գրեթե նույն մակարդակից։ Դրանից 10 սմ վերև (17 g քառ.) հայտնաբերվել է դեպի ներս ու ներքև քիչ լայնացող պսակով կիսագնդաձև մի գունազարդ թաս (տախտ. I_2)։ Այդպիսի թասեր հանդես են գալիս վաղ հելլենիստական շրջանում և լայն տարածում ստանում ուշ հելլենիստականում։ Դրանք հայտնի են Արմավիրից և մեծ քանակությամբ գտնվել են Դառնիից, Արտաշատի I, VII բլուրներից ու դամբարանադաշտից։ VIII բլրի թասը իր անփույթ գունազարդումով և անփայլ մակերեսով բնորոշ է մ. թ. ա. I դ. երկրորդ կեսին։ Մ. թ. ա. I. դ. կեսերին կարելի է վերագրել նաև աստիճանաբար լայնացող ուղղահայաց եզրերով ավարտվող գունազարդ պնակը (տախտ. I_{11}) և եռոտերև հիշեցնող ծորակավոր քթիկով սափորը (տախտ. I_1)։ Պնակի մակերեսը անփայլ է, իսկ վրայի զարդերն՝ անփույթ։ Այդպիսի պնակ հայտնաբերվել է I բլրի մ. թ. ա. I դ. շերտերից։ Սափորն իր ձգված իրանով, զարդով (դրանց անփույթ կատարումով), կանթի ձևով (որը բնորոշ է մ. թ. I դ. խեցեղենին) և անփայլ մակերեսով այդ տեսակի անոթների ամենաուշ օրինակներից է։

Արտավազդ II-ի պղնձե դրամը հայտնաբերվել է բլրի մակերեսից 60 սմ խորության վրա գտնվող, 20 սմ հաստությամբ մոխրաշերտերից 20 սմ ցած, առաջին շրջանի պատի վերին եզրի մոտ։ Անմիջապես մոխրաշերտի տակ և մոխրաշերտի մեջ մ. թ. ա. I դ. խեցեղենի առանձին բեկորների հետ միասին հայտնաբերվեցին նաև մ. թ. I դ. խեցեղենի մնացորդներ։ Այդպիսի երևույթ նկատվում է մի շարք այլ քառակուսիներում (12—18 EFg և այլն)։ 15 F քառակուսում, ուր բոլոր շերտերին վերաբերող նյութեր կային (անշատված մոխրաշերտով) և առաջին շինարարական շրջանին վերաբերող շերտը 25 սմ հաստությամբ նստած էր կավե սվաղով հարթեցրած անհարթ ժայռի վրա, հայտնաբերվեցին մ. թ. I դ. պատկանող միայն երկու բեկորներ։ Դրանք օղակաձև ոտքով, ձևավոր պսակներով ափսեների կամ ուղղահայաց եզրերով, սկուտեղների, կարմիր փայլեցրած թասերի ու բաժակների բեկորներ են, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են երկրորդ շինարարական շրջանում։ Այսպիսով, շինարարական առաջին շրջանի շերտերում հանդիպում են մ. թ. ա. II—I և մ. թ. I դ. նյութեր։ Նշանակում է այստեղի շինությունները կառուցվել են քաղաքի հիմնադրման ժամանակ, գոյատևել են նաև մ. թ. I դ. և, ամենայն հավանականությամբ, քանդվել մ. թ. 59 թ., Կորբուլոնի կողմից Արտաշատը ավերելու ժամանակ։ Ըստ երևույթին, ավերածությունն ուղեկցվել է հրդեհով, որի հետքերը նկատելի են։ Շատ չանցած՝ հավանաբար մ. թ. 66 թ.՝ Տրդատի Հռոմից վերադառնալուց հետո (հնարավոր է նաև մինչ այդ) այստեղ կյանքը նորից վերականգնվել է։ Դրա համար էլ երկրորդ շինարարական շրջանի ներքին հորիզոնի և առաջին շինարարական շրջանի վերին շերտերի նյութերի միջև ժամանակագրական առումով ընդհատում չի նկատվում։

Երկրորդ շինարարական շրջանի շինությունների հետքերը լավ են պահպանվել պեղված գրեթե ողջ տարածության վրա։ Այս շրջանի շերտերը հանդիպում են մակերեսից 40—80 սմ խորությամբ։ Բլրի բարձրադիր մասերում առաջին շինարարական շրջանի մնացորդները գրեթե հիմնովին մաքրվել են,



SUhS I

SUhS. II

SUh.S. III

իսկ թեք լանջին այն ուղղակի հարթեցվել է, որով և վերացվել են շինարարական առաջին շրջանի ժամանակ եղած տեղանքի բնական անհարթությունները և բլուրը նորից յուրացվել է։ Պատերի մնացորդներից դատելով՝ կարելի է ասել, որ բլրի շինությունները կառուցվել են միասնական ընդհանուր հատակագծով, և նախորդի համեմատ՝ ուղղությունները քիչ փոխվել են (ձգվում են ուղիղ արևելքից-արևմուտք)։ Սենյակները կառուցված են երկարավուն միջանցքների երկու թևերում։ Այս շրջանում ևս կատարվել են միջնապատերի տեղափոխություններ և այլ մանր վերակառուցումներ։ Երկրորդ շինարարական շրջանի պատերը կառուցվել են առաջինի եղանակով։ Հյուսիսային բարձրադիր մասերում դրանք դրված են ուղղակի ժայռի, հարավային կողմում՝ փափուկ հողի, իսկ շատ տեղերում՝ նախորդ շրջանի պատերի վրա։ Պատերի ստորին մասերը և հիմքերը ճեղքված, տձև քարերից են, սենյակների հատակները հարթեցված են քարերով և կավի շաղախով։ Որոշ սենյակների հատակներ տերրասաձև շարվածքներ ունեն (18, 19 EF քառ.)։ Ավելի հաճախ են հանդիպում կրաշաղախի սվաղի, քիվերի և կղմինդրի բեկորներ։ Կառույցներում օգտագործվել են փայտե սյուներ, որոնք հենվել են կրաքարե և բազալտե խարիսխների վրա։



Նկ. 2

Այս շրջանի կառույցներից ամենահետաքրքիրը 14 EF քառակուսիներում բացված շրավազանն է (նկ. 2)։ Այն տեղավորված է ուղղանկյուն սենյակի մեջ (քարե պատերի պահպանված բարձրությունը 1 մ)։ 30 սմ լայնությամբ աղյուսաշար պատը ներսից ունի 4—5 սմ հաստությամբ կրաշաղախե շերտ, որի մեջ եղեգի ձողեր են եղել։ Ջրավազանը բաղկացած է երեք մասից՝ մեկ մեծ և երկու փոքր (ընդհանուր մակերեսը՝ 375×380 սմ)։ Պահպանված առանձին հատվածներ և աղյուսների հետքերը հնարավորություն են տալիս գաղափար կազմելու ավազանի հատակի ձևի մասին։ Հատակին, սվաղի վրա

շարված են եղել կավե լավ թրծած, քառակուսի աղյուսներ (37×37 սմ), որոնց մակերեսը պատված է 1—2 սմ հաստությամբ կրաշաղախով։ Ավազանում հայտնաբերվել են պատերի քանդված սվաղի, կավե խողովակի, խեցեղենի և ապակու բեկորներ։ Կարելի է ենթադրել, որ ավազանը ծառայել է խմելու ջրի համար և կրկնակի պատերի մեջ է առնվել ամրությունն ու ջրի սառնությունն ապահովելու նպատակով։

Այս շերտին է վերաբերում նաև 18—19 E քառակուսու կրաշաղախ հատակի տակ, մակերեսից 140 սմ խորության վրա բացված, քարե, միաշար ուղղանկյուն ավազանը, որի հատակին կան սվաղի հետքեր։ Ավազանի պահպանված մասի մեջ ոչինչ չհայտնաբերվեց, իսկ այդ մակարդակից վեր գտնվեցին I—II դ. խեցեղենի բեկորներ։

Երկրորդ շինարարական շրջանի շերտը մակերեսից խորն է. բարձրադիր մասերում հասնում է 20—30 սմ (11—21 AC քառ.), իսկ թեք լանջին՝ 0,80—1 մ, երբեմն մինչև 1,50 մ։ Այս շրջանի մերքին շերտերի՝ շրավազանի, ավազանի, 12 D և F քառակուսիների վառարանների հետ առնչվող խեցեղեն ու ապակե անոթները, կավե արձանիկները թվագրվում են մ. թ. I—II դդ.։ Խեցեղեն անոթների շատ ձևեր համանման են Գառնիի մ. թ. I—II դդ. դամբարանների խեցեղենին։ Կան նաև շատ նոր ձևեր, որոնք բնորոշ են այդ դարաշրջաններին։

Ուշագրավ է շրավազանից (14 F քառ.) գտնված երկկանթանի գավաթը (տախտ. II_{23}), որն ունի ուղղահայաց իրան, հորիզոնական ելուստներով ակոսավոր կանթեր։ Այդպիսի մի գավաթ էլ գտնվել է VII բլրի I—II դդ. շերտից։ Գավաթների նմանօրինակ կանթեր Հայաստանում հանդիպում են հելլենիստական շրջանից՝ Արտաշատում (I բլուր), Գառնիում և այլուր։ Սակայն Սև ծովի հյուսիսային ափերին գտնվող Տիրիտակիի[6] հեռավոր նմանություն ունեցող գավաթը (մ. թ. ա. I դ. վերջ-մ. թ. I դ. սկիզբը)։ որը համարվում է փոքրասիական, Կեպիից[7] և այլ վայրերից[8] հայտնաբերված նման գավաթները (մ. թ. I դ. կես) հնարավորություն են ընձեռում այն թվագրելու մ. թ. I դ.։ Այդ թվագրության օգտին են խոսում նաև վերջինիս հետ հայտնաբերված խեցեղեն անոթները և ձվաձև իրանով, տեղական համարվող ապակյա սրվակի բեկորը (I—II դդ.)։ Խեցեղեն անոթների մեջ առանձին խումբ են կազմում տարբեր չափերի սկուտեղների (տրամ. 35—36 սմ, բարձր. 3—4 սմ) բեկորները և նույն ձևի ափսեները (տախտ. $II_{10-13, 15, 20}$)։ Դրանք պատրաստված են դուրգի վրա, երեսպատված երբեմնի անհավասար քսված կարմիր ու դարչնագույն անգորներով և խնամքով փայլեցված են։ Սկուտեղների և ափսեների մեծ մասը ներսից, երբեմն էլ դրսի հատակին ունեն սեղմումով արված 3—6 շարք շրջանաձև ակոսներ։ Այդպիսի սկուտեղներ ու ափ-

---

[6] Т. Н. Книпович, Краснолаковая керамика первых веков н. э. («Материалы и исследования по археологии СССР» (այսուհետև՝ МИА), 25, М., 1952, стр. 311. рис. 9_5.

[7] Н. П. Сорокина, Раскопки некрополя в Кепах в 1959—1960 годах («Краткие сообщения Института археологии» (այսուհետև՝ КСИА), № 91, 1962, стр. 102, рис. 40); Н. З. Кунина и Н. П. Сорокина, Стеклянные бальзамарии Боспора («Труды Гос. Эрмитажа» (ТГЭ), XIII, Л., 1972, стр. 150, рис. 4_{48}).

[8] И. И. Гущина, Находки из Краснодарского края («Советская археология» (այսուհետև՝ СА), 1962, № 2, стр. 208, рис. 2_2).

սններ հայտնաբերվել են Արտաշատի I բլրի վերին շերտի դամբարանադաշտերից (1971 թ. 1 i քառ., 40 սմ խոր.) և Գառնիից[9], որոնք թվագրվում են մ. թ. I—II դդ.։

Դեղնավուն կավե ներմուծված սկուտեղների բեկորներ (մուգ կարմիր լաքապատ) հայտնաբերվել են Գառնիից, Արտաշատի I, VII (տախտ. $II_{9,\ 1}$) բլուրներից ու դամբարանադաշտից։ Այդպիսի կարմիր լաքով սկուտեղներ գտնվել են Աթենքի ագորայից[10] (մ. թ. ա. II—մ. թ. I դ.), Միրմեկիայից[11], որը համարվում է փոքրասիական (մ. թ. I դ. կեսեր), Կեպիից[12] (մ. թ. I—II դդ.)։

Արտաշատից հայտնաբերված սկուտեղներն ու ափսեները փոքրասիական կենտրոններից ներմուծված հռոմեական (terra sigilata) խեցեղենի ընդօրինակություններ են։ Ճիշտ է, դրանք հռոմեական խեցեղենի նրբությունն ու որակը չունեն, սակայն իրենց մշակվածությամբ մ. թ. I—II դդ. Հայաստանի խեցեղենի լավագույն օրինակներից են։ Դրանք մեզ մոտ հանդես են գալիս մ. թ. I դ. սկզբներից և հարատևում են մինչև II դ. վերջը։

Այս տեսակետից ուշագրավ են նաև օղակաձև ոտքով և ձևավոր պսակով ափսեները (տախտ. II_{18-10}), որոնք իրենց նախատիպերն ունեն Արմավիրից և Արտաշատից գտնված մ. թ. ա. II—I դդ. գունազարդ ափսեների մեջ։ Հռոմեական կարմիր լաքով պատած խեցեղենի մեջ ևս այս ձևը հանդիպում է[13] (մ. թ. ա. I—մ. թ. II դդ.)։ Հետևաբար, պետք է ենթադրել, որ տեղական ձևերն հարստացվել են ներմուծված խեցեղենի առանձին գծերով։ Նույնը կարելի է ասել կիսագնդաձև թասերի մասին, որոնք պատած են մեծ մասամբ դեղնականաչավուն անգորով (տախտ. II_{26}), երբեմն էլ շագանակագույն անգորի հետքերով։ Սրանք գրեթե բոլորն էլ դրսից, վերին մասում ունեն մեկ կամ երկու փորագիր գոտիներ։ Նման թասեր շատ են հանդիպում Արտաշատի I—II դդ. դամբարաններից, ինչպես նաև I բլրից, մ. թ. ա. I դ. և մ. թ. I դ. շերտերից (3 i. 4 H, 4 I, 1 F քառ.), որոնք Արտաշատում հանդես են գալիս մ. թ. ա. I դ. վերջերից և հարատևում են մինչև մ. թ. II դ.։ Դրանք I—II դդ. խեցեղենի ամենատարածված օրինակներից են, տեղական կիսագնդաձև թասերի հետագա ձևերը և իրենց մշակումով շատ բնորոշ են մ. թ. I—II դդ. խեցեղենին։ Սակայն, հիշյալ թասերը աղերսվում են նաև հռոմեական կարմիր լաքով պատած խեցեղենի հետ, իրենց կառուցվածքով մոտ են Չանգարլուի (Փոքր Ասիա)[14] № 20 տիպին, Սամոս կղզուց[15], մերձսևծովյան քաղաք-

---

[9] Б. Н. Аракелян, Гарни, 1, Результаты раскопок 1949—1950, Ереван, 1952, стр. 41, рис. 28 (նաև՝ պետական պատմական թանգարան, 1967/37)։

[10] H. S. Robinson, Pottery of the Roman Period, Chronology, The Athenian agora, Princeton, 1959, pl. 1, F1, pl. 60, F1, F2, pl. 62, F27.

[11] Т. Н. Книпович, նշվ. աշխ., էջ 298, նկ. $2_{,4}$, $_{4a}$։

[12] Э. Я. Николаева, Раскопки городища Кепы в 1964 г. (КСИА, вып. 109, 1967, стр. 98, рис. $36_{,13}$).

[13] H. S. Robinson, Pottery of the Roman Period, Chronology, pl. 60, F5; Э. Я. Николаева, նշվ. աշխ., էջ 98, նկ. $36_{,5}$։

[14] S. Loeschcke, Sigilata Töpfereien in Tschandarli („Mitteilungen des Deutschen Archaeologischen Institut", XXXVII, 1912, տախտ. XXVIII, $_{21}$)։

[15] W. Technau, Griechische Keramik in Samischen Heraion, („Mitteilungen des Deutschen Archaeologischen Institut„, LIV, 1929, էջ 49, նկ. 39)։

ներ Իլուրատից և Պանտիկապեյոնից (մ. թ. I դ. վերջ) գտնված, Պերգամոնից ներմուծված թասերին[16]։

Երկրորդ շինարարական շրջանի նյութերից կարևոր են ապակյա անոթները։ Զվաձև իրանով, տեղական համարվող ապակե սրվակի բեկորը Հայաստանում II դ. ուշ չի հանդիպում (տախտ. II_2)։ Կենցաղային այս անոթները, ապակյա բաժակներն ու թասերը տարբեր ձևերի են, բաց կանաչավուն ու դեղնավուն երանգով և ունեն դուրս լայնացող պսակներ (տախտ. $II_{1, 2, 4, 6, 8}$)։ Մեկի իրանը հարդարված է փորագիր գոտիներով։ Դրանք Կիպրոսից[17], Պանտիկապեյոնից[18], Սարդինիայից և Տրիպոլիից[19] գտնված անոթների նմանությամբ թվագրվում են մ. թ. I դ.։

Նյութերի քննությունը ցույց է տալիս, որ երկրորդ շինարարական շրջանը սկսվում է մ. թ. I դ. 60-ական թվականներից և հարատևում է մինչև II դ. երրորդ քառորդը, որովհետև շինարարական երրորդ շրջանի կառույցների տակ հայտնաբերվում են I—II դդ. առատ նյութ։ Երրորդ շինարարական շրջանում հիմնականում օգտագործվել են երկրորդի շինություններն ու պատերը։ Սակայն, ընդհանուր հատակագիծը պահպանելով հանդերձ, կատարվել են մի շարք վերափոխություններ՝ բարձրացվել են հատակները, որոշ պատեր, որ քանդված են եղել, այլևս չեն վերականգնվել։

Իսկ ե՞րբ են կատարվել դրանք։ Հայտնի է, որ Տրդատ I թագավորությունից սկսած (66 թ.) մինչև 163 թ. Հայաստանը պահպանում էր իր անկախությունը։ Հայաստանի անկախությանը վերջ տալու Տրայանոս կայսեր փորձերը (115—117 թթ., գրավեց նաև Արտաշատը) երկար չեն տևում, և շուտով, Վաղարշակ I թագավորության օրոք, երկրում հաստատվում է խաղաղություն։ Սակայն, 144 թ. Հռոմը, առանց պարթևների համաձայնության, հայկական գահն հանձնում է Սոհեմոսին, որի պատճառով սկսվում են նոր կռիվներ Հռոմի և պարթևների միջև, որոնք տևում են մի քանի տասնյակ տարիներ։ Պարթևների թագավոր Վաղարշ III մտնում է Հայաստան, շարդում հռոմեական զորքերին և 161 թ. Սոհեմոսի փոխարեն թագավոր է կարգում Բակուրին։ Այս քայլը չհանդուրժելով, Մարկոս Ավրելիոս կայսրը իր բանակները ուղարկում է արևելք՝ պարթևների դեմ։ 163 թ. բանակներից մեկը, Ստատիոս Պրիսկոսի ղեկավարությամբ, արշավում է Հայաստան և գրավում Արտաշատը, որի հետևանքով էլ քաղաքը ավերվում է։ Հայաստանի վարչական կենտրոնը տեղափոխվում է նոր հիմնադրված Կայնոպոլիս (Վաղարշապատ) քաղաքը, որտեղ ամրանալով, հռոմեացիները փորձում են վերացնել հայկական թագավորությունը և Հայաստանը հռչակել հռոմեական պրովինցիա։ Սա առիթ դարձավ համաժողովրդական ապստամբության, որը ճնշելուց հետո՝ հռոմեացիները Կայնոպոլիսը հռչակեցին Մեծ Հայքի «գլխավոր քաղաք» և գահը կրկին հանձնեցին Սոհեմոսին[20] (164 թ.)։

---

[16] Л. Ф. Силантьева, Краснолаковая керамика из раскопок Иллурата (МИА, № 85, Л., 1958, рис. $2_{,2}$, $4_{,2}$, стр. 288).

[17] O. Vessberg, Roman Glass in Cyprus, Opuscula archaeologia, VII, Lund, 1952, pl. I, 29, 30, էջ 114 և հտ.։

[18] Н. З. Кунина и Н. П. Сорокина, Стеклянные бальзамарин Боспора (ТГЭ, стр. 164, рис. $10_{,4, 5}$).

[19] G. Eisin, Glass, I, New-York, 1927, pl. 64, p. 314.

[20] К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.—

Այս դեպքերն ավարտվեցին 166 թ.՝ հռոմեացիների և պարթևների հաշտությամբ։ Պետք է ենթադրել, որ Ստատիոս Պրիսկոսի կողմից Արտաշատն այնպիսի ավերածության չի ենթարկվել, ինչպես Կորբուլոնի ժամանակ։ Հավանաբար ավերվել են քաղաքի առանձին թաղամասեր ու շինություններ և շինարարական երրորդ շրջանին վերաբերող հիմնական վերափոխություններ կատարվել են 163 թ. դեպքերից հետո։ Ուրեմն, շինարարական երկրորդ շրջանը հարատևել է մինչև 163 թ.։

Երրորդ շինարարական շրջանը սկսվում է II դ. վերջերին և III դ. սկզբին, երբ այս բլրի վրա աստիճանաբար վերակառուցվում են ավերված շենքերը և կատարվում մի շարք վերափոխություններ։ Բլրի հյուսիսային թևի կենտրոնական մասերում որոշ սենյակներ վերածվում են բաղնիքի և արտադրական կառույցների (խեցեղենի թրծման հնոցի), իսկ մնացածները օգտագործվում են իբրև բնակելի տներ։ Ավերված ջրավազանը և հնոցին կից սենյակները այլևս չեն վերականգնվել։ Երրորդ շինարարական շրջանը մակերեսից 30—40 սմ խորության վրա է՝ և շերտն ունի 40—60 սմ հաստություն։

Այս շրջանի ամենակարևոր շինություններից մեկը՝ բաղնիքը (13, 14,



Նկ. 3

15 CD քառ.), որը գտնվում էր չորրորդ շինարարական շրջանի քարե սալահատակի տակ, շատ վատ էր պահպանվել (նկ. 3)։ Այն զբաղեցնում էր արևելքից-արևմուտք ձգվող առաջին միջանցքի ձախ թևի վերջին երկու սենյակները։ Նրա անշուք կառուցվածքը վկայում է, որ եղել է շարքային բաղնիք։ Առաջին սենյակի (արևմուտքից հաշված) կենտրոնում կային զուգահեռ աստիճանաձև ցածր շարվածքներ, որը հավանաբար եղել է ջուր տաքացնելու տեղ (praefurnium), ուր հնարավոր էր նաև լողանալ։

IV в. н. э.), М—Л., 1953, стр. 228—237; «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1971, էջ 780—787։

Երկրորդ սենյակում, որը տաք բաժանմունքն էր (caldarium), խառը վիճակում կային տարբեր երկարության կավե, երկու կողերին քառանկյունի երկու փոքր բացվածքով խողովակներ։ Ըստ երևույթին, դրանք ծառայել են իբրև սյուներ կամ հենարաններ երկրորդ հատակը պահելու համար (նկ. 4)։ Սենյակները տաքացվել են երկու հատակների միջև ստեղծված աղատ տարածությունով անցնող տաք ծխի միջոցով (hypocaustum)։ Նման կավե խողովակներ հայտնաբերվել են նաև Գառնիի[21] (II—III դդ.), Խարակսի[22], Բուլղարիայի[23] ուշ հռոմեական շրջանի բաղնիքներում և այլուր։



Նկ. 4

Պեղավայրի հյուսիսային թևի կենտրոնական սենյակներից մեկի հարավարևելյան անկյունում տեղավորված է խեցեղեն թրծելու հնոցը։ Սա կառուցելիս ավելացվել է թեք դրված մի նեղ պատ, իսկ կավը հունցելու համար պատրաստված, կրաշաղախով սվաղած ավազանի (16 B քառ.) ծայրը դրված է նախկին սենյակի արևմտյան պատի վրա, որն այդ ժամանակ արդեն քանդված է եղել։ Հնոցը շրջանաձև է (տրամ. 160×170 սմ. պատի լայն. 20—25 սմ), դրված է մայր ժայռի վրա։ Այն կենտրոնում ունեցել է աղյուսե նեղ միջնապատ՝ երկրորդ հատակը պահելու համար։ Հատակը, որի բարձրությունը պատերի տակ 50—70 սմ է, հենված է հնոցի կավե պատի վրա 10 սմ հաստությամբ։ Հնոցն ունի 50 սմ լայնությամբ դուռ և մոխիրը քաշելու համար արված փոս (տրամ. 70—80 սմ, երկ. դռնից 275 սմ), որի պատերը շարված են սալ քարերով և կղմինդրների բեկորներով։

---

21 Б. Н. Аракелян, Гарни, II, Ереван, 1957, стр. 26.

22 В. Д. Блаватский, Харакс, (МИА, 19), М., 1951, стр. 253, 283—288, рис. 4.

23 Д. Цончев, Хисарскитъ бани, Годишникъ на Пловдивската народна библиотека и музей, 1935 и 1936. София, 1937, стр. 140 и сл.

Փոսի մոխրաշերտում գտնվեցին մեծ քանակությամբ նույնատիպ խեցեղենի բեկորներ և ամբողջացող անոթներ, որոնք, հավանաբար, թրծելու ընթացքում խոտանվել և դուրս են հանվել մոխրի հետ թափելու համար։

Հնոցը ավերվել է կավե խողովակներ թրծելու ընթացքում։ Դուռը փակվել է բաղնիքի քառանկյուն խողովակի մասով, տաքությունը երկար պահելու համար։ Կավե խողովակները թրծելիս նրանց տակ, որպես հենարան դրել են կղմինդրի եզրի բեկորներ, որոնք ավելի լայն են ու մասսիվ և տարբերվում են մ. թ. ա. II—մ. թ. II դդ. կղմինդրներից։ Խողովակների (երկայնքով) և կղմինդրների մի մասը ուժեղ կրակի մեջ ընկնելու հետևանքով խիստ վառվել է ու ճաքել (գերթրծվել է)։

Այս շրջանի վերին շերտերի հետ է կապվում նաև 14 D գծի վրա գտնվող թոնիրը։

Երրորդ շինարարական շրջանի խեցեղեն և ապակի հայտնաբերվել են բաղնիքում։ Դրանք նախորդ շրջանի խեցեղենի հետագա զարգացած ձևեր են, թեև պսակների, զարդերի ու մակերեսների մշակմամբ տարբերվում են նրանցից։ Փայլեցրած խեցեղենն այստեղ քիչ է։ Ընդհանրապես այս շերտի խեցեղեն անոթներն առաջին անգամն են հայտնաբերվում և նրանց զուգահեռները Հայաստանի այլ հուշարձաններից մեզ հայտնի չեն։ Սակայն վերջիններս թվագրվում են իրենց հետ հայտնաբերված ապակե սրվակներով և անտիկ շրջանի մյուս երկրների հուշարձաններում գտնված խեցեղեն զուգահեռ նյութերով։ Դրանցից են տաշտերը, բաժակները, փոքր կճուճները, սափորները և այլն։ Տաշտերից մեկի (տախտ. III_2) ձևավոր պսակի վրայով անցնում է զիգզագաձև փորադիր զարդ, որը ծորակի երկու կողմերում ավարտվում է օձանման, օղակաձև ծայրերով։ Մակերեսը պատած է դեղնականաչավուն անգոբով և անփայլ է։ Նման տաշտեր հայտնաբերվել են Վրաստանում, որոնք թվագրվում են III—IV դդ. և IV դ. ուշ այլևս չեն հանդիպում[24]։ Նշված տաշտն հիշեցնող փորագիր, զիգզագաձև և ուղիղ զարդերով (II—III դ.) անոթներ հայտնի են նաև մերձսևծովյան հուշարձաններից[25] (Պանտիկկապեյոն, III դ., Իլուրատ, III դ. կես և այլն), Աթենքի[26] ագորայից (III դ.) և միջինասիական հուշարձաններից[27] (Կյաուր-Կալա, Դալվերզին-Թեփե, Էրկ-Կալա)։

Բաղնիքից գտնված ձևավոր պսակով սկուտեղը (տախտ. III_4) ներսից, հատակին ունի զույգ համակենտրոն, ակոսավոր շրջաններ, որոնք հիշեցնում

---

24 Л. Ф. Силантьева, նշվ. աշխ., էջ 296 և հտ., նկ. 11; И. Б. Зеест, Пантикапейская керамика сарматского времени (по материалам раскопок Пантикапея 1945—1949 гг.) (МИА, № 56, М., 1957, стр. 151, рис. $5_{,3}$); Н. П. Сорокина, О стеклянных сосудах с каплями синего стекла из Причерноморья (СА, № 4, 1971, стр. 97, рис. $6_{,2}$); Т. Н. Книпович, Краснолаковая керамика первых веков н. э. (МИА, 25, стр. 318—319, рис. 12).

25 H. A. Thompson, Excavatons in the Athenian Agora 1943, Hesperia, XVIII, 1949, էջ 217, տախտ. 41, ${}_2$։

26 М. Синауридзе, Раннефеодальная керамика Восточной Грузии (по материалам Гос. музея Грузии («Материалы по истории материальной культуры Грузии» (на груз. яз.), Тбилиси, 1966, стр. 50, табл. IV—V).

27 Л. М. Рутковская, Парфянская керамика древнего Мерва (СА, № 3, 1958, рис. $5_{,35}$); Г. А. Пугаченкова, Керамические печи кушанского времени в южном Узбекистане (СА, № 2, 1973, стр. 210, рис. 6); З. И. Усманова, Эрк-Кала («Труды Южно-Туркменистанской археологической комплексной экспедиции», т. XII, Ашхабад, 1968, рис. $43_{,6,7}$).

են I—II դդ. սկուտեղների և ափսեների զարդերը։ Դրսից հատակն անհարթ է, մակերեսն անփայլ (տրամ. 44 սմ, բարձր. 5,4 սմ, հատ. տրամ. 36 սմ)։ Այն ևս իր զուգահեռներն ունի Մերձսևծովյան[28] հուշարձանների III—IV դդ. խեցեղենի մեջ (Տիրիտակի, Միրմեկիա, Խերսոնես)։

Ամենահետաքրքիր օրինակներից է անփայլ կճուճը, որն ունի հորիզոնական կանթեր, սանրով արված ակոսավոր գոտիներ, վերադիր օձազարդ և խաչաձև պատկերված երկթև նետասլաքներ, մակերեսը պատած է դեղնականաչավուն անգորով (տախտ. III_1)։ Այս կճուճի ամբողջ հարդարանքը հատուկ չէ մ. թ. I դդ. մեզ հայտնի խեցեղենին։

Բաղնիքից հայտնաբերված խեցեղենից ուշագրավ են դուրս ճկված պսակով գավաթները (տախտ. III_7), որոնք նման են վառարանում գտնված մի կանթանի կճուճներին, արտահայտվող ոտքով, ներճկված վզով բաժակները (տախտ. III_9), որոնք հիշեցնում են՝ Գառնիի № 79 դամբարանի I—II դդ. բաժակը, դուրս լայնացող լայն պսակներով սրնակները (տախտ. $III_{5,6}$), որոնք թե՛ իրենց ձևերով և թե՛ մշակումով բնորոշ են III—IV դդ. խեցեղենին։ Նման պնակների բեկորներ և մի կանթանի կճուճներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են վառարանի, ինչպես նաև մյուս քառակուսիների վերին շերտերից։ Դրանց մի մասը պատած է դեղնականաչավուն, մյուսը՝ վարդագույն անգորով և փայլեցված չեն։ Այդպիսի անոթ հայտնաբերվել է Տանաիսում[29] (III դ. կես) և նրա մերձակա դամբարանադաշտերում, Կեպիում (II դ. երկրորդ կես, III դ. սկիզբ)։ Դրանք շատ բնորոշ են Խերսոնեսի II—III դդ. խեցեղենի համար և հաճախ են հանդիպում Ղրիմի հարավ-արևմտյան մասի դամբարաններում[30]։ Պսակի այդ ձևը բնորոշ է նաև IV դ. ապակյա գավաթների ու թասերի համար[31]։

Այս առումով հետաքրքիր են հորիզոնական առևակոսներով, մի կանթանի ներմուծված սափորն ու երկկանթանի կճուճը (տախտ. III_8)։ Ճիշտ է, այս անոթներն անմիջապես բաղնիքից ու վառարանից չեն հայտնաբերվել, սակայն գտնվել են նմանօրինակ խեցեղենի հետ։ Անտիկ շրջանի այլ հնավայրերից հայտնի հորիզոնական առևակոսներով անոթները թվագրվում են II դ. վերջով, IV դ. և մեծ մասամբ III դարով[32]։

---

28 В. Ф. Гайдукевич, Раскопки Тиритаки в 1935—1940 гг. (МИА, № 25, стр. 123, рис. 153); Е. Г. Кастанаян, Лепная керамика Мирмекия и Тиритаки (МИА, № 25, стр. 285—286, рис. $47._6$); Т. Н. Книпович, նշվ. աշխ.; Н. П. Сорокина, О стеклянных сосудах с каплями синего стекла из Причерноморья, стр. 97, рис. $6._2$.

29 Т. М. Арсеньева, Местная керамика из Танаиса (СА, № 3, 1958, стр. 208, рис. $4._1$); Д. Б. Шелов, Некрополь Танаиса (МИА. № 98, М., 1961, стр. 69, табл. $XXIX._5$); В. Ф. Гайдукевич, Некрополи некоторых боспорских городов (МИА, № 69, стр. 191, рис. 61).

30 Н. П. Сорокина, Фигурный стеклянный сосуд из Кеп (СА, № 4, 1968, стр. 185—186, рис. $4._2$); Н. А. Богданова, И. И. Гущина, Новые могильники II—III веков н. э. у с. Скалистое в Крыму (КСИА, вып. 112, 1967, рис. $46._8$).

31 Н. П. Сорокина, О стеклянных сосудах с каплями синего стекла из Причерноморья, рис. 1, 2.

32 Н. П. Сорокина, Фигурный стеклянный сосуд из Кеп, стр. 185, 186, рис. $4._{1,3}$; И. Т. Кругликова, Итоги семилетних раскопок поселения у д. Семеновки (КСИА, вып. 95, 1963, стр. 46, рис. $17._7$); В. Ф. Гайдукевич, Иллурат (МИА, № 85, М.—Л., 1958, рис. $23._2$); И. Т. Кругликова, Боспор в позднеэнтичное время, М., 1966, стр. 154, рис. $40._{2,5}$.

Բաղնիքի և ընդհանրապես երրորդ շինարարական շրջանի թվագրության համար կարևոր նշանակություն ունեն ապակյա անոթները, որոնք հայտնաբերվել են վերոհիշյալ խեցեղենի հետ։ Այս առումով ուշագրավ են երկկանթանի գնդաձև իրանով սրվակները (տախտ. $III_{11, 15}$), դուրս ձկված պսակով բաժակները (տախտ. III_{12}), շորս կողմից ներճկված, ուղղահայաց առևակոսներով բաժակները (տախտ. II_{15}), կաղապարի մեջ փչելու եղանակով պատրաստված սրվակները (տախտ. $III_{13, 14}$), որոնք իրենց առանձնահատկություններով, ձևով, գույնով, կանթերով, հարդարանքով բնորոշ են մ. թ. II դ. երկրորդ կեսից IV դդ.։ Դրանք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանում և այլուր։

Այսպիսով, երրորդ շինարարական շրջանը սկսվելով II դ. վերջերից հարատևում է մինչև IV դ. սկիզբը, որովհետև վերը նշված շինությունները չորրորդ շրջանում այլևս չկան, մնացել են երրորդի սալահատակի տակ։ Դա, ըստ երևույթին, տեղի է ունեցել Խոսրով Կոտակի օրոք (330—338 թթ.). մայրաքաղաքը Դվին տեղափոխելու ժամանակ փոխադրվել է նաև բնակչության մի մասը (հավանաբար հիմնականում վերնախավն ու արհեստավորությունը)՝ նոր մայրաքաղաքում ևս արհեստագործությունը զարգացնելու և տեղական պահանջարկը բավարարելու նպատակով կամ, թերևս, քաղաքը ավերվել է պատերազմների հետևանքով։ Հայտնի է, որ 335 թ. Հայաստան ներխուժած հյուսիսային լեռնականները մազքութների Սանեսան թագավորի գլխավորությամբ գրավել էին գրեթե ողջ երկիրը։ Խոսրով Կոտակը փախել էր Կոգովիտ գավառի Դարոյնք բերդը, իսկ Վաչե զորավարը գնացել էր հունաց կողմը։ Վաչեի հարձակման ժամանակ Սանեսանը գտնվում էր Վաղարշապատում (336 թ.), Վաչեն նրան հետապնդեց և սպանեց։ Հնարավոր էր, որ քաղաքը ավերված լինի նաև 338 թ. Շապուհ II-ի զորքերից կրած ծանր պարտության ժամանակ, երբ երկրում խառը վիճակ էր, միայն 339 թ. Կոստանդիոս կայսեր միջամտությամբ Հայաստանը վերստին խաղաղվեց, և Տիրանը դարձավ Հայաստանի թագավոր[33]։

Ահա թե ինչու չորրորդ շինարարական շրջանում, բնակչությունը շատ նոսրացած լինելու պատճառով, օգտագործվել է միայն բլրի մի մասը։ Այս շրջանում հիմնականում օգտագործվել են երրորդ շինարարական շրջանի պատերը, որոնք, ի տարբերություն նախորդ շրջանների, հողակերտ են և ունեն տարբեր լայնություն (60—90 սմ), միջնապատերը ավելի նեղ են։ Բոլոր սենյակների և միջանցքների հատակներն ու պատերը սվաղված են 3 սմ հաստությամբ կրաշաղախով, որով և չորրորդ շինարարական շրջանը որոշակիորեն անջատվում է երրորդից (նկ. 5)։ Սենյակներից մեկում պահպանվել են բաղնիքից բերված կավե աղյուսներով և քարե սալերով (17 D քառ.) պատրաստված աստիճանները։ Այս շրջանի սենյակների թիվը մեծ չէ. դրանք զբաղեցնում են արևելյան հատվածը, իսկ մնացած մասը հարթեցվել է և սալապատվել։ Սալահատակը լավ է պահպանվել հատկապես վառարանի, բաղնիքի, ջրավազանի հատվածներում և 15 ABE, 16—17 C քառակուսիներում։ 25—30 սմ հաստությամբ սալահատակի միջից և վրայից հայտնաբերված և նախորդ շրջանի նյութերի միջև ժամանակագրական խզում չի նկատվում.

---

33 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 145—151։



Նկ. 5

դրանք նույնն են, ինչ որ III—IV դդ. նյութերը։ Դա բացատրվում է նրանով, որ մայրաքաղաքը տեղափոխվելուց հետո Արտաշատը դեռևս գոյատևել է (նկ. 6)։ Սակայն Շապուհ II 369 թ. արշավանքի ժամանակ[34], երբ քաղաքն

34 Նույն տեղում, էջ 198—201։

ավերվում է և բնակչության մի մասը գերեվարվում, VIII բլրի կյանքը դադարում է։ Հետևաբար չորրորդ շինարարական շրջանը գոյատևել է գրեթե 30 տարի՝ 330-ական թվականներից մինչև 369 թ.։ Այսպիսով, ստացվում է հետևյալ շերտագրական պատկերը. առաջին շինարարական շրջան՝ մ. թ. ա. 180—170-ականից մինչև մ. թ. 59 թ., երկրորդ՝ 60-ականից—160-ական թթ., երրորդ՝ II դ. վերջից—III դ. սկզբից՝ IV դ. 30-ական թթ., չորրորդ՝ IV դ. 30-ական թթ.—369 թ., որից հետո քաղաքն ամփոփվում է միայն մեծ բլրի (№ II) գագաթին, ուր կառուցվում է նոր ամրություն։ Հնարավոր է որոշ չափով բնակչություն եղած լինի նաև եկեղեցու բլրի (№ VI) վրա։

Արտաշատը, կապված երկրի քաղաքական անցուդարձի հետ, թեև մինչև VIII դ. դեռևս հիշատակվում էր պատմական աղբյուրներում, բայց վաղուց արդեն կորցրել էր իր երբեմնի փառքն ու նշանակությունը։

СТРАТИГРАФИЯ VIII-ого ХОЛМА АРТАШАТА

Ж. Д. ХАЧАТРЯН, А. Г. КАНЕЦЯН

Резюме

В 1970 г. археологическая экспедиция Института археологии и этнографии АН Арм. ССР под руководством проф. Б. Н. Аракеляна приступила к раскопкам одной из столиц античной Армении—Арташата. Благодаря раскопкам выяснилось, что город занимал огромную территорию (приблизительно 500 *га*), а цитадель располагалась на холмах Хор Вираба (всего II холмов).

В 1973 г. раскопки велись на северном крыле VIII-ого холма, где было раскопано около 600 кв. *м*. площади. Сравнительно хорошо сохранилась планировка в южной части холма (1—2 *м* от поверхности).

В результате раскопок обнаружены остатки жилых, общественных зданий, а также археологический материал (керамика, стекло и т. д.), изучение которого приводит к выводу, что население на территории указанного холма, по всей вероятности, занималось ремеслами, а сам холм являлся одним из ремесленных кварталов города. Керамическое производство представлено печами различных периодов.

Раскопки показывают, что VIII-ой холм был застроен с первых же лет основания города, и жизнь здесь продолжалась до половины IV в. Различаются четыре строительных слоя, построенных по общему плану: первый относится к 180—170-ым гг. до н. э.—59 г. н. э., второй—к 60-ым—160-ым гг. н. э., третий—к концу II—началу III вв.—по 30-ые гг. IV в. н. э., четвертый охватывает период с 30-ых по 60-ые гг. IV в.